

Հաստատված է նոր խմբագրությամբ
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Եգանյան

«17» հունվարի, 2019թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/084L

Նոր խմբագրությամբ գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Զավադյան

« __ » _____ 2019թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ԲԱԺԻՆ 1. Ընդհանուր դրույթներ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

- 1) «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Օպերատոր) «Սակագների մասին կանոնները» մշակված են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Օպերատորի կանոնների համաձայն:
- 2) Սույն կանոնները սահմանում են Օպերատորի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների չափերը:
- 3) Օպերատորին վճարվող միջնորդավճարները և այլ վճարները պետք է կատարվեն սույն կանոններով նախատեսված ժամկետներում: Այն դեպքում, երբ նման ժամկետ սահմանված չէ, վճարումը պետք է իրականացվի Օպերատորի հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:
- 4) Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում Օպերատորն իրավունք ունի պահանջել, իսկ սույն կանոնների համաձայն վճարողը (պարտապանը) պարտավոր է վճարել տուգանք՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.5%-ի չափով:

Գլուխ 2. Կանոններում օգտագործվող հիմնական հասկացությունները

- 5) Սույն կանոններում օգտագործված հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 6) «**Գործարքի գումար**». գործարքի արդյունքում ձեռք բերված ֆինանսական գործիքի դիմաց գնորդի կողմից վաճառողին վճարման ենթակա գումար (գործարքի առարկա ֆինանսական գործիքի մեկ լոտի գնի և լոտերի քանակի արտադրյալը):
- 7) «**Կորպորատիվ պարտատոմս**». իրավաբանական անձի կողմից թողարկված պարտատոմս:
- 8) «**Պետական պարտատոմսեր**». Հայաստանի Հանրապետության անունից թողարկված պետական գանձապետական պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսեր:
- 9) «**Թողարկման ծավալ**». հաշվարկվում է թողարկվող բաժնային արժեթղթերի քանակը բազմապատկելով դրանց տեղաբաշխման գնով: Եթե բաժնային արժեթղթերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գնով, ապա թողարկման ծավալը հաշվարկվում է թողարկվող բաժնային արժեթղթերի քանակը բազմապատկելով դրանց անվանական արժեքով:
- 10) «**Բաժնային արժեթղթերի շուկայական արժեք**». հաշվարկվում է բաժնետոմսերի, բաժնետոմսերի հիման վրա թողարկված դեպոզիտար ստացականների կամ ներդրումային ֆոնդերի փայերի քանակը բազմապատկելով դրանց շուկայական արժեքով: Սույն կետի իմաստով որպես բաժնային արժեթղթերի շուկայական արժեք է ընդունվում նախորդ եռամսյակում Օպերատորի կողմից երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կազմակերպվող առևտրի ընթացքում այդ բաժնային արժեթղթերով կնքված գործարքների միջին կշռված գինը, իսկ եթե նախորդ եռամսյակում տվյալ արժեթղթով երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կազմակերպվող առևտրի ընթացքում գործարք չի կնքվել, ապա այդ բաժնային արժեթղթերով Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրի ընթացքում կնքված վերջին գործարքի գինը: Եթե նման հաշվարկի կատարումն անհնար է, ապա որպես շուկայական արժեք ընդունվում է՝

- ա) բաժնետոմսերի համար՝ անկախ աուդիտորի կողմից հաստատված Թողարկողի վերջին ֆինանսական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և այդ բաժնետոմսերի քանակի արտադրյալը,
 - բ) դեպոզիտար ստացականների համար՝ այդ դեպոզիտար ստացականների հիմքում ընկած բաժնետոմսերի շուկայական արժեքը,
 - գ) ներդրումային ֆոնդերի փայերի համար՝ անկախ աուդիտորի կողմից հաստատված Թողարկողի վերջին ֆինանսական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված՝ Թողարկողի զուտ ակտիվների արժեքը:
- 11) «**Պարտատոմսերի անվանական ծավալ**»․ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի քանակի և անվանական արժեքի արտադրյալը:
- 12) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված նշանակությունները:

ԲԱԺԻՆ 2. Արժեթղթերի ցուցակման սակագներ

Գլուխ 3. Արժեթղթերի ցուցակման գործընթացի վճար

- 13) Սույն գլխի դրույթները չեն տարածվում պարտատոմսերի ցուցակման կամ դրանց առևտրին թույլատրման վրա:
- 14) Նախքան բաժնետոմսերի ցուցակման կամ դրանց առևտրի թույլատրման գործընթացը սկսելը՝ թողարկողը Օպերատորին վճարում է ցուցակման հայտը ներկայացնելու վճար, որը կազմում է 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետով նախատեսված գումարը հետագայում հաշվանցվում է ցուցակման վճարի գումարից:
- 15) Եթե թողարկողի արժեթղթերը բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակից տեղափոխվում են բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակ, ապա Թողարկողը վճարում է բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակի համար սահմանված ցուցակման վճարի 50%-ը: Եթե Թողարկողի դիմումի համաձայն նրա արժեթղթերը բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակից տեղափոխվում են բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակ, ապա Թողարկողը վճարում է բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակի համար սահմանված ցուցակման վճարի 50%-ը: Եթե Թողարկողի արժեթղթերի տեղափոխումը բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակից բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակ իրականացվում է Օպերատորի նախաձեռնությամբ, ապա Թողարկողը որևէ լրացուցիչ վճարում չի կատարում:
- 16) Եթե Ազատ շուկայում առևտրին թույլատրված Թողարկողի արժեթղթերը ցուցակվում են բաժնետոմսերի հիմնական (A) կամ երկրորդային (B) ցուցակում, ապա Թողարկողը վճարում է տվյալ ցուցակում ցուցակման համար նախատեսված վճարն ամբողջությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ազատ շուկայում տվյալ արժեթղթերի առևտուրը թույլատրելու օրվանից անցել է նվազագույնը 12 ամիս, որի դեպքում Թողարկողը վճարում է, համապատասխանաբար, բաժնետոմսերի հիմնական (A) կամ երկրորդային (B) ցուցակում ցուցակման համար նախատեսված վճարի 50%-ը:

Գլուխ 4. Բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ցուցակման վճար

- 17) Բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում բաժնետոմսերը ցուցակելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող ցուցակման վճար՝ 800,000 (ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակվող բաժնետոմսերի շուկայական

արժեքի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված ցուցակման վճարի չափը չի կարող գերազանցել 3,000,000 (երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:

- 18) Բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում արդեն իսկ ցուցակված բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճարը կազմում է 400,000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած թողարկման ծավալի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված ցուցակման վճարի չափը չի կարող գերազանցել 1,000,000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 19) Թողարկողի աշխատակիցների համար կազմակերպվող բաժնետոմսերի փակ տեղաբաշխման դեպքում բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճար չի գանձվում:

Գլուխ 5. Բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում ցուցակման վճար

- 20) Բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում բաժնետոմսերը ցուցակելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող ցուցակման վճար՝ 400,000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակվող բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված ցուցակման վճարի չափը չի կարող գերազանցել 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 21) Բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում արդեն իսկ ցուցակված բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճարը կազմում է 200,000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած թողարկման ծավալի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված ցուցակման վճարի չափը չի կարող գերազանցել 1,000,000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 22) Թողարկողի աշխատակիցների համար կազմակերպվող բաժնետոմսերի փակ տեղաբաշխման դեպքում բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճար չի գանձվում:

Գլուխ 6. Ազատ շուկայում առևտրին բաժնային արժեթղթերի թույլատրման վճար

- 23) Ազատ շուկայում բաժնային արժեթղթերն ընդգրկելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող վճար՝ 50,000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած առևտրին թույլատրվող բաժնային արժեթղթերի շուկայական արժեքի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված վճարի չափը չի կարող գերազանցել 100,000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 24) Ազատ շուկայում արդեն իսկ ընդգրկված բաժնային արժեթղթերի նոր թողարկումների համար սահմանված վճարը կազմում է 25,000 (քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած թողարկման ծավալի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված վճարի չափը չի կարող գերազանցել 100,000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:

25) Թողարկողի աշխատակիցների համար կազմակերպվող բաժնային արժեթղթերի փակ տեղաբաշխման դեպքում բաժնային արժեթղթերի նոր թողարկումների համար ցուցակման վճար չի գանձվում:

Գլուխ 7. Պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ցուցակման վճար

26) Պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում պարտատոմսերը ցուցակելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող ցուցակման վճար՝ 300,000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

27) Եթե պարտատոմսեր Թողարկողի բաժնետոմսերն արդեն իսկ ցուցակված են Բորսայում, ապա Թողարկողը վճարում է սույն կանոնների 26) կետով նախատեսված վճարի 50%-ը:

Գլուխ 8. Պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ցուցակման վճար

28) Պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում պարտատոմսերը ցուցակելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող ցուցակման վճար՝ 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

29) Եթե պարտատոմսեր Թողարկողի բաժնետոմսերն արդեն իսկ ցուցակված են Բորսայում, ապա Թողարկողը վճարում է սույն կանոնների 28) կետով նախատեսված վճարի 50%-ը:

Գլուխ 9. Ազատ շուկայում առևտրին պարտատոմսերի և պարտատոմսերի հիման վրա թողարկված դեպոզիտար ստացականների թույլատրման վճար

30) Ազատ շուկայում պարտատոմսերը կամ պարտատոմսերի հիման վրա թողարկված դեպոզիտար ստացականներն ընդգրկելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող վճար՝ 50,000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

31) Եթե պարտատոմսեր կամ պարտատոմսերի հիման վրա դեպոզիտար ստացականներ Թողարկողի բաժնետոմսերն արդեն իսկ ցուցակված են Բորսայում, ապա Թողարկողը վճարում է սույն կանոնների 30) կետով նախատեսված վճարի 50%-ը:

Գլուխ 10. Արժեթղթերի ցուցակման պահպանման սակագներ

32) Օպերատորի մոտ ցուցակված կամ առևտրին թույլատրված արժեթղթերի թողարկողներից գանձվում են ցուցակման կամ առևտրի թույլատրման պահպանման վճարներ (այսուհետ՝ ցուցակման պահպանման վճար):

33) Ցուցակման պահպանման վճարները գանձվում են եռամսյակային կտրվածքով՝ իբրև կանխավճար յուրաքանչյուր եռամսյակի սկզբին:

34) Յուրաքանչյուր եռամսյակի սկզբին նախորդ եռամսյակի տվյալների հիման վրա Օպերատորը հաշվարկում է ընթացիկ եռամսյակի համար թողարկողից գանձվող վճարը, որը թողարկողի կողմից ենթակա է վճարման Օպերատորից համապատասխան ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

35) Եթե արժեթղթերը ցուցակվում (առևտրին թույլատրվում) կամ ապացուցակվում (առևտրին թույլտվությունը դադարեցվում) են օրացուցային եռամսյակի ընթացքում, ապա ցուցակման պահպանման վճարը հաշվարկվում է այն ամիսների համար, որոնց ընթացքում արժեթղթերը ցուցակված կամ առևտրին թույլատրված են եղել: Այս դեպքում եռամսյակի

համար վճարվելիք գումարը բաժանվում է երեքի և բազմապատկվում է նշված ամիսների թվով: Սույն կետի իմաստով ոչ լրիվ ամիսն ընդունվում է լրիվ ամսվան հավասար:

- 36) Օպերատորի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում Օպերատորի կանոններով սահմանված կարգով թողարկողի որևէ դասի բաժնային արժեթղթերի ցուցակման պահպանման համար թողարկողը Օպերատորին վճարում է եռամսյակային վճար՝ 450,000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.0075%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Եթե թողարկողի բաժնետոմսերի շուկայական արժեքը գերազանցում է երկու միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը, ապա եռամսյակային վճարի չափը սահմանվում է 600,000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի նշված սահմանը գերազանցող գումարի 0.0035%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 37) Օպերատորի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում Օպերատորի կանոններով սահմանված կարգով թողարկողի որևէ դասի բաժնային արժեթղթերի ցուցակման պահպանման համար թողարկողը Օպերատորին վճարում է եռամսյակային վճար՝ 300,000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.0075%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Եթե թողարկողի բաժնետոմսերի շուկայական արժեքը գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը, ապա եռամսյակային վճարի չափը սահմանվում է 375,000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի նշված սահմանը գերազանցող գումարի 0.0035%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 38) Ազատ շուկայում ընդգրկված թողարկողի որևէ դասի բաժնային արժեթղթերի համար թողարկողը Օպերատորին վճարում է եռամսյակային վճար՝ 45,000 (քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած առևտրին թույլատրված բաժնային արժեթղթերի շուկայական արժեքի 0.0075%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Եթե թողարկողի բաժնային արժեթղթերի շուկայական արժեքը գերազանցում է վեց հարյուր միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը, ապա եռամսյակային վճարի չափը սահմանվում է 90,000 (իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած առևտրին թույլատրված բաժնային արժեթղթերի շուկայական արժեքի նշված սահմանը գերազանցող գումարի 0.0035%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված եռամսյակային վճարի չափը բաժնետոմսերի դեպքում չի կարող գերազանցել 450,000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 39) Օպերատորի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում Օպերատորի կանոններով սահմանված կարգով թողարկողի որևէ դասի պարտատոմսի ցուցակման պահպանման համար թողարկողը Օպերատորին վճարում է եռամսյակային վճար՝ 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալի 0.0025%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված եռամսյակային վճարի չափը չի կարող գերազանցել 225,000 (երկու հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 40) Օպերատորի պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում Օպերատորի կանոններով սահմանված կարգով թողարկողի որևէ դասի պարտատոմսի ցուցակման պահպանման համար թողարկողը Օպերատորին վճարում է եռամսյակային վճար՝ 75,000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալի 0.0025%-ը՝ առանց

ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված եռամսյակային վճարի չափը չի կարող գերազանցել 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:

- 41) Ազատ շուկայում ընդգրկված թողարկողի որևէ դասի պարտատոմսի կամ պարտատոմսերի հիման վրա թողարկված դեպոզիտար ստացականների համար թողարկողը Օպերատորին վճարում է եռամսյակային վճար՝ 45,000 (քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած պարտատոմսերի կամ պարտատոմսերի հիման վրա թողարկված դեպոզիտար ստացականների շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալի 0.0025%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված եռամսյակային վճարի չափը պարտատոմսերի դեպքում չի կարող գերազանցել 90,000 (իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 42) Եթե պարտատոմսեր թողարկողի բաժնետոմսերն արդեն իսկ ցուցակված են Բորսայում, ապա Թողարկողը վճարում է սույն կանոնների 39), 40) կամ 41) կետով նախատեսված վճարի 50%-ը:
- 43) Արտարժույթով արտահայտված արժեթղթերի դեպքում սույն Բաժնում սահմանված վճարները հաշվարկվում են համապատասխան ժամանակաշրջանի սկզբին նախորդող օրվա համար տվյալ արժույթի նկատմամբ << կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

ԲԱԺԻՆ 3. Անդամավճարներ և շուկային մասնակցության վճարներ

Գլուխ 11. Անդամավճարներ

- 44) Բորսայի անդամների կողմից կորպորատիվ արժեթղթերի շուկայում և պետական պարտատոմսերի առևտրի հարթակում Բորսայի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցելու համար վճարվող անդամավճարի (այսուհետ՝ Անդամավճար) չափը կազմում է ամսական 50,000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 45) Բորսայի կողմից կազմակերպվող՝ պետական պարտատոմսերի աճուրդների հարթակում, ինչպես նաև արտարժույթի և/կամ վարկային ռեսուրսների շուկայում առևտրին մասնակցելու իրավունք ստացած Բորսայի անդամները վճարում են նաև համապատասխան հարթակի և/կամ շուկայի (շուկաների) համար սույն կանոնների 12-րդ գլխով սահմանված վճարները:
- 46) Անդամավճարը գանձվում է կիսամյակային կտրվածքով՝ իբրև կանխավճար, յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի սկզբին:
- 47) Եթե Բորսայի անդամի կարգավիճակը շնորհվում կամ դադարեցվում է օրացույցային կիսամյակի ընթացքում, ապա Անդամավճարը հաշվարկվում է այն ամիսների համար, որոնց ընթացքում տվյալ կազմակերպությունն ունեցել է Բորսայի անդամի կարգավիճակ, ընդ որում՝ ոչ լրիվ ամիսն ընդունվում է լրիվ ամսվան հավասար:
- 48) Անդամակցության դադարեցումը, այդ թվում Բորսայի անդամի ցանկությամբ, ինչպես նաև անդամության կամ առևտրի իրավունքի կասեցումը չի կարող հիմք հանդիսանալ վճարված Անդամավճարը հետ պահանջելու համար:

Գլուխ 12. Շուկային մասնակցության վճարներ

- 49) Շուկայի մասնակիցների կողմից Օպերատորի կողմից կազմակերպվող արտարժույթի և/կամ վարկային ռեսուրսների շուկաներից յուրաքանչյուրում՝ անկախ տվյալ շուկայում կազմակերպվող կամ ընտրված հարթակների քանակից, ինչպես նաև պետական պարտատոմսերի առևտրի հարթակում առևտրին մասնակցելու համար կատարվող մասնակցության վճարի (այսուհետ՝ Մասնակցության վճար) չափը կազմում է ամսական 100,000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 50) Շուկայի մասնակիցների կողմից Օպերատորի կողմից կազմակերպվող պետական պարտատոմսերի աճուրդների հարթակում առևտրին մասնակցելու համար կատարվող Մասնակցության վճարի չափը կազմում է ամսական 370,000 (երեք հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 51) Շուկային մասնակցության վճարը գանձվում է կիսամյակային կտրվածքով՝ իբրև կանխավճար յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի սկզբին:
- 52) Եթե որևէ շուկայում և/կամ հարթակում Շուկայի մասնակցի կարգավիճակը շնորհիվ կամ դադարեցվում է օրացուցային կիսամյակի ընթացքում, ապա Մասնակցության վճարը հաշվարկվում է այն ամիսների համար, որոնց ընթացքում տվյալ կազմակերպությունն ունեցել է Շուկայի մասնակցի կարգավիճակ, ընդ որում՝ ոչ լրիվ ամիսն ընդունվում է լրիվ ամսվան հավասար:
- 53) Որևէ շուկայում և/կամ հարթակում Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցումը, այդ թվում Շուկայի մասնակցի ցանկությամբ, ինչպես նաև Շուկայի մասնակցի կարգավիճակի կամ առևտրի իրավունքի կասեցումը չի կարող հիմք հանդիսանալ վճարված Մասնակցության վճարը հետ պահանջելու համար:
- 54) Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերությանը, բանկին կամ վարկային կազմակերպությանը տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակի տրամադրման համար սահմանված միանվագ վճարի չափը կազմում է 30,000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 55) Տեղաբաշխման արդյունքների չկայացած ճանաչումը և աճուրդի անցկացման օրվա տեղափոխումը չի կարող հիմք հանդիսանալ տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակի տրամադրման համար վճարված միանվագ վճարը հետ պահանջելու համար, բացառությամբ, եթե Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերության, բանկի կամ վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակի տրամադրման համար ներկայացրած դիմումը մերժվել է:

ԲԱԺԻՆ 4. Առևտրից միջնորդավճարներ

Գլուխ 13. Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում և հարթակներում կնքված գործարքից միջնորդավճար

- 56) Օպերատորի կողմից կազմակերպվող շուկաներում և/կամ հարթակներում կնքված գործարքի կողմերից գանձվում է միջնորդավճար՝ սույն գլխով սահմանված կարգով և չափով: Միջնորդավճարը ենթակա է վճարման Օպերատորից ամսական կտրվածքով համապատասխան հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:
- 57) Օպերատորի՝ բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ցուցակված բաժնային արժեթղթերով կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է

միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.05%-ի (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոս) չափով:

- 58) Օպերատորի՝ բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում ցուցակված բաժնային արժեթղթերով կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.1%-ի (գրո ամբողջ մեկ տասնորդական տոկոս) չափով:
- 59) Ազատ շուկայում ընդգրկված բաժնային արժեթղթերով կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.2%-ի (գրո ամբողջ երկու տասնորդական տոկոս) չափով:
- 60) Կորպորատիվ պարտատոմսերով կամ պարտատոմսերի հիման վրա թողարկված դեպոզիտար ստացականներով կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.005%-ի (գրո ամբողջ հինգ հազարերորդական տոկոս) չափով:
- 61) Արտարժույթով կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.005%-ի (գրո ամբողջ հինգ հազարերորդական տոկոս) չափով:
- 62) Պետական պարտատոմսերով կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.005%-ի (գրո ամբողջ հինգ հազարերորդական տոկոս) չափով:
- 63) Վարկային ռեսուրսներով կնքված գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի անվանական ծավալի 0.0003%*T չափով, որտեղ T-ն վարկային ռեսուրսով գործարքի կնքման և մարման ամսաթվերի միջև օրացուցային օրերի քանակն է:
- 64) Ռեպո կամ սվոպ գործարք կնքելու համար ռեպո/սվոպ կամ հակադարձ ռեպո/սվոպ գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է միջնորդավճար՝ ռեպո/սվոպ-ուղղակի գործարքի գումարի 0.0003%*T չափով, որտեղ T-ն ռեպո/սվոպ-ուղղակի և ռեպո/սվոպ-հետադարձ գործարքների միջև օրացուցային օրերի քանակն է: Ռեպո/սվոպ-հետադարձ գործարքի համար գործարքի կողմերից միջնորդավճար չի գանձվում:
- 65) Եթե սույն կանոնների 57) - 62) կետերով սահմանված գործարքի կողմը տվյալ գործարքի առարկա ֆինանսական գործիքի Շուկա ստեղծողն է կամ Գնանշողի կարգավիճակ ունեցողը, ապա նրանից գանձվող միջնորդավճարը կազմում է սահմանված միջնորդավճարի 50 (հիսուն) տոկոսը:

Գլուխ 14. Տեղաբաշխման և հետգնման աճուրդների ընթացքում կնքված գործարքից միջնորդավճար

- 66) Բաժնային արժեթղթերի տեղաբաշխման աճուրդի ընթացքում կնքված գործարքի՝ արժեթղթեր ձեռքբերած կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.05%-ի (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոս) չափով:
- 67) Կորպորատիվ պարտատոմսերի կամ պարտատոմսերի հիման վրա թողարկված դեպոզիտար ստացականների տեղաբաշխման աճուրդի ընթացքում կնքված գործարքի՝ պարտատոմսեր ձեռքբերած կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.005%-ի (գրո ամբողջ հինգ հազարերորդական տոկոս) չափով:
- 68) Պետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի ընթացքում կնքված գործարքի՝ պարտատոմսեր ձեռքբերած կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.02%-ի (գրո ամբողջ երկու հարյուրերորդական տոկոս) չափով:

69) Պետական պարտատոմսերի հետզնման աճուրդի ընթացքում կնքված գործարքի՝ պարտատոմսեր վաճառող կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.02%-ի (զրո ամբողջ երկու հարյուրերորդական տոկոս) չափով:

Գլուխ 15. Առևտրից միջնորդավճարների հաշվարկման կարգը

- 70) Սույն բաժնին համապատասխան հաշվարկված միջնորդավճարների գումարները կլորացվում են Հայաստանի Հանրապետության մեկ դրամի ճշտությամբ, բայց ոչ պակաս 10 (տաս) դրամից:
- 71) Արտարժույթով արտահայտված արժեթղթերի դեպքում սույն բաժնին համապատասխան միջնորդավճարը հաշվարկվում է գործարքի կնքման օրվան նախորդող օրվա համար տվյալ արժույթի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

ԲԱԺԻՆ 5. Այլ վճարներ

Գլուխ 16. Օպերատորի առևտրային համակարգին միանալու համար վճարներ

- 72) Օպերատորի առևտրային համակարգին առևտրին մասնակցելու իրավունքով առաջին հեռացված տերմինալի շահագործման համար անհրաժեշտ ծրագրային մոդուլը Բորսայի անդամին կամ Շուկայի մասնակցին օգտագործման տրամադրվում է անվճար:
- 73) Օպերատորի առևտրային համակարգին առևտրին մասնակցելու իրավունքով մեկից ավելի հեռացված տերմինալների միացման դեպքում երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ տերմինալից գանձվող վճարը կազմում է ամսական 20,000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 74) Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին իրական ժամանակի ռեժիմում դիտորդի կարգավիճակով հետևելու և Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված տեղեկությունները (որը չի կարող ներառել բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ) դիտելու հնարավորությամբ Օպերատորի առևտրային համակարգին հեռացված տերմինալների միջոցով միանալու համար յուրաքանչյուր տերմինալից գանձվող վճարը կազմում է ամսական 20,000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 75) ՀՀ Ֆինանսների նախարարությունը (պետական պարտատոմսերի առևտրի մասով) և ՀՀ կենտրոնական բանկը դիտորդի կարգավիճակով Օպերատորի առևտրային համակարգին միանալու և իրական ժամանակի ռեժիմում առևտրի ընթացքին դիտորդի կարգավիճակով հետևելու հնարավորություն ստանում են անվճար:

Գլուխ 17. Օպերատորի տեղեկատվության տարածման համար վճարներ

- 76) Օպերատորի տեղեկատվության տարածման համար գանձվող գումարը յուրաքանչյուր տեղեկատվական կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող այլ կազմակերպությունից (այսուհետ՝ Տարածող) կազմում է ամսական ոչ պակաս, քան 20,000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 77) Նույն ծավալով, որակով, ձևով և պարբերականությամբ բացահայտվող տեղեկատվության տարածման համար Օպերատորի կողմից գանձվող գումարը պետք է լինի նույնը բոլոր Տարածողների համար:

- 78) Տարածվող տեղեկատվության ծավալը, ձևը, պարբերականությունը և բացահայտվող տեղեկատվության տարածման համար Օպերատորի կողմից գանձվող գումարի չափը սահմանվում է Տարածողի հետ կնքվող պայմանագրով:
- 79) Սույն գլխին համապատասխան տարածվող տեղեկատվությունը չի կարող ներառել բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ:
- 80) Օպերատորը կարող է սույն կանոնների 76) - 77) կետերի պահանջներից բացառություն սահմանել առանձին Տարածողների և/կամ տեղեկատվության համար՝ հաշվի առնելով տվյալ Տարածողի դերը և տարածվող առանձին տեղեկությունների կարևորությունը:

Գլուխ 18. Անցումային դրույթներ

- 81) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: